

մեզ նման առանց մեղաց . յառաջ քան զյախտեանս 'ի
 Հօրէ՛ ծնեալ ըստ Աստուածութեանն . իսկ 'ի վերջին ա-
 ւուրս նոյնն վասն մեր եւ վասն մերոյ վերկութեան 'ի
 Մարեմայ յԱստուածածին Կուսէ՛ ըստ Մարգկութեան :
 Զմի եւ զնոյն Քրիստոս Որդի , Տէր , Միածին , յերկուս բը-
 նութիւնս՝ առանց շփոթութեան , առանց փոփոխութեան ,
 առանց բաժանելոյ եւ առանց անջատելոյ ճանաչելի . բը-
 նաւ ոչ 'ի բաց բարձեալ զայլակերպութիւն բնութեանց
 վասն միաւորութեանն , այլ մանաւանդ անկորուստ պա-
 հեալ զառանձին սեպհականութիւն երկուց բնութեանց ,
 եւ 'ի մի դէմն եւ գոյացութիւն 'ի միասին ընթացեալ . ոչ
 յերկուս դէմն անջատեալ կամ բաժանեալ , այլ մի եւ նոյն
 Որդի եւ Միածին Աստուած բան , Տէր Յիսուս Քրիստոս :
 Ահա այս է դաւանութիւն ժողովոյն Քաղկեդոնի :

Որոշեցան հակառակութիւնքն Երուսաղէմի եւ Անտիո-
 քայ եպիսկոպոսաց վասն դաւառաց . Արարիա եւ երկօքին
 Փիւնիկատան , այն է Փիւնիկէ Մովսէսերեայ եւ Փիւնիկէ
 Լիբանանու ընդ իշխանութեամբ Անտիոքայ , իսկ երեքին
 մասունք աշխարհին Պաղեստինոյ կամ Ս . Երկրին լինել
 ընդ իշխանութեամբ եպիսկոպոսին Երուսաղէմի : Ի վերջին
 'ի հնգետասաներորդ գումարման ընթերցան 28 կանոնս
 սահմանեալ 'ի զգուշութիւն հաւատացելոյ . եւ 'ի սմին գու-
 մարման սահմանեցին զաթոռն Կոստանդինուպօլսի երկրոր-
 դական պատուով մեծարել 'ի մէջ եկեղեցւոյ զկնի գահին
 Հռոմայ՝ 'ի պատիւ թագաւորեալ քաղաքին , որում գըժ-
 կամակեալ ընդդէմ կացին փոխանորդ Լեւոնի , եւ անդէն
 անդ նախ քան զցրուիլ ժողովոյն անկաւ դժտութիւն 'ի
 միջի նոցա : Տեա յարշնաֆէր սոյն ժողովոյ . եւ Պաթ . Տիեզ . Ժող .
 336 :

Քարծան եպիսկոպոսունք եւ վանականք յուրաքանչիւր
 աշխարհ իւր եւ Կայսրն արար հրովարտակ չհակառակիլ
 ումեք սահմանաց ժողովոյն Քաղկեդոնի . չեւ էր սփռեալ
 հրովարտակն եւ բազումք 'ի հարց ոչ եւս էին հասեալ 'ի
 տեղիս իւրեանց , իսկ եւ իսկ սկիզբն առնոյր աղմուկս :
 Նախ 'ի Պաղեստին աճապարեալ հասին վանականք բա-
 զումք , որոց գլխաւոր էր Թէոդոսիոս ոմն անուն : Ժո-
 ղովեալ վանականացն գունդ գունդ յուղեալ չփոթե-